ՀՀ Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանին

Դիմող՝ Գագիկ Ջիվանի Սարիբեկյան

Հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ,

գ. Դարպաս, 3-րդ փ., 1 նրբ., 2-րդ տուն

Հեռ.՝ 094-13-03-09

Պատճենը՝ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի

Վանաձորի գրասենյակի ղեկավար՝ Արթուր Սաքունցին

Հասցե՝ Տիգրան Մեծի 59

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,

20.02.2020թ-ին Վանաձոր համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանին հասցեագրված թիվ 01/108.3.2/01576-2020 գրությամբ տեղեկացրել եք, որ ինձ՝ Գագիկ Ջիվանի Սարիբեկյանիս սեփականության իրավունքով պատկանող /հասարակական կառուցապատման նպատակով/ պատկանող Մոսկովյան փողոցի թիվ 70-1/10 հողամասում խանութ կառուցելու առաջարկությանը մարզպետարանը չի տալիս իր դրական եզրակացությունը, քանի որ Վանաձոր քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի համաձայն՝ տվյալ տարածքը հանդիսանում է հանրային օգտագործման կանաչ տարածք:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դրույթները, խնդրում եմ տրամադրել տեղեկատվությու առ այն, թե՝

1. Մարզպետարանը ո՞ր իրավական ակտերով է լիազորված տալու եզրակացություն՝ անձին սեփականության իրավունքով պատկանող և

հասարակական կառուցապատման նպատակով գնված տարածքում շինություն կառուցելու վերաբերյալ:

2. Ո՞ր թվականից է վկայակոչված տարածքը Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծում ընդգրկվել որպես հանրային օգտագործման կանաչ գոտի:
3. Եթե տվյալ տարածքը հանդիսանում է հանրային օգտագործման կանաչ գոտի, ապա ինչպե՞ս է այն օտարվել հասարակական կառուցապատման իրավունքով:

Բացի վերոնշյալ հարցերին օրենքով սահմանված կարգով պատասխանելը, խնդրում եմ տրամադրել ինչպես հարցերի պատասխանների հիմքում ընկած փաստաթղթերի, այնպես էլ 20.02.2020թ.-ի թիվ 01/108.3.2/01576-2020 գրության իրավաչափությունը հավաստող համապատասխան փաստաթղթերի պատճենները:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կից ներկայացնում եմ՝ անշարժ գույքի սեփականության վկայականի պատճենը:

Հարգանքով՝ Գագիկ Սարիբեկյան

26.02.2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «17» Հունիսի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ԳԱԳԻԿ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՋԻՎԱՆԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Վանաձոր ք. Մոսկովյան փողոց 70-1/10 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի վաճառքի պայմանագիր 12/06/2019թ

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 06-001-0424-0147

Մակերեսի չափը (հա)՝ 0.0049

Նպատակային նշանակությունը՝ բնակելի պարտեզ

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐ STATE CADASTRE

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ ESTATE CADASTRE

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Հայկուհի Պապիկյան

գբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

Կ.Տ.